

պատրիարքի հոգածութեան արդիւնքն էր այս միացումը Երուսաղէմի Մինաս Պատրիարքի զեղծումներուն հանդէպ: Ասկից զատ պատրիարքի կողմէն Երուսաղէմ գացող փոխանորդներն ալ պատճառ եղան որ խնդիրը փառասիրութեան ու շարաշահութեան կերպարանքն առաւ: Միութիւնը, ինչ պատրուակի ներքեւ ալ եղած ըլլայ, աղիտաբեր հետեւանքներ ունեցաւ: Պոլսոյ պատրիարքական աթոռը այնչափ անպատուուած էր որ մէկ տարւան ընթացքին մէջ, երկու երեք պատրիարք կը փոխուէր, շատ ստորին միջոցներով: Աշխարհականներն իսկ կը գրաւէին Վ. Պոլսոյ պատրիարքական Աթոռը եւ զեղծ ու մեղծ ընթացքով մը կ'իշխէին եկեղեցւոյն վրայ: Թէ՛ այս էր պատճառը, որ սչ միայն Երուսաղէմի, այլ նոյն իսկ Պոլսոյ Աթոռը չէր կրնար կառավարուիլ պէտք եղածին պէս, եւ թէ՛ տեղւոյն հեռաւորութիւնը արգելք կ'ըլլար սեւէ հսկողութեան Երուսաղէմի վրայ: Թող որ Պոլսոյ Պատրիարքը, իբր պատրիարք Երուսաղէմայ, Պոլսոյ եւ Պոլսէն անցնող բոլոր ուխտաւորներուն դարպասը իր պատրիարքարանին մէջ կը դանձէր եւ ուխտաւորները «խէրէ- շխէ- շխէ» կը ստիպուէին Երուսաղէմ երթալ գրեթէ ձեռնունայն, միմիայն պատրիարքին անդորրադրով:՝ Քանի որ այսպէս ձեռք կը բերէին Երուսաղէմի դրամներուն կարեւոր մէկ մասը, ընդհանրապէս հոգ իսկ ընելու վիճակին մէջ չէին Երուսաղէմի Աթոռին նկատմամբ:

Պատրիարքարանի կողմէն միշտ տոհմապաշտիկ դրութեամբ (népotisme), աշխարհական փոխանորդներ կը ղրկուէին Երուսաղէմ, «Վէպէլ եւ

¹ Մասնաւոր գանձապետ մը, որ կ'երեւայ ժողովքով կ'ընտրուէր, կը դանձէր ուխտաւորներուն դարպասը: Վերջին գանձապետն եղաւ Մահտեսի Մուրատը, որ 1705 Փետր. 2ին ընտրեցաւ եւ 1710 Նոյ. 28 մեռաւ. (Ընդրձ. Օրացոյց 1901. էջ 120 Ծանօթ. 1:)